Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99
R-17

Գիրք

891.99
Ք-17

31.99
Բ-17

NOV 2011

ՎՐԷԺ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԵՑ

ՎԱՐԴԱՆ ՔԱՄԱԼԵԱՆՑ

(ԽԱՐԲԵՐԴՑԻ)

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ

Երկրորդ Տպագրութիւն Յաւելուածով

ՀԱՅԵՐ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԻՒՆ
UNION GÉNÉRALE ARMÉNIENNE DE BIENFAISANCE
CONSTANTINA
ՎԱՐԴԱՆԻ ՄԱՍՆԱՃԻՒՂ

գնա՛, գրոյկ իմ պատեցի,
Հայ եղբարս տեսնելու,
Եւ բաց սիրտդ նոցա առջեւ,
Խոր խոցերդ ցոյց տալու:

Հեղինակ

ՎԱՌՆԱ

Печатница на К. НИКОЛОВЪ — Варна.

1903—1904

29.08.2013
60380

57198-66

ՆՈՒԷՐ

ԻՄ ՅԱՐԳԵԼԻ ԲԱՐԵԿԱՄ

Պ. ԳԱԼՈՒՍՏ ՆՈՐՇԱՏԵԱՆԻ

Ի ՆՇԱՆ ԱՆԿԵՂԾ ՍԻՐՈՅ

ՄՏՔԻՍ ՄՈՒԱՉԻՆ ՊՏՈՒՂԸ

ՀԵՂԻՆԱԿԸ



Դէ՛հ ելնենք, եղբա՛ր, իջնենք մրրտի դաշտ,
Լուծենք մեր վրէժ, զէնքերով անհաշտ.
Թէ որ մենք այսպէս, միշտ մնանք թամրած,
Զբլլար փրկութիւն, խոպառ ենք կորած։

Կռուելով քաջ քաջ, չախչախենք Ներանց,
Զը թողնենք այնտեղ հետքն վատթարաց,
Փոխան Խալիֆայ Մեծն Տիգրաններ,
Բազմին Հայաստան, հայոց արքայներ։

Բա՛ւ է հայրենեաց անվերջ դաւաճան
Ոսոխ թշնամիք մեր վրայ խնդան.
Բլլանք մեր յետնոց անմահ պարծանքներ,
Որպէս մեր քաջքն՝ Վարդան, Վահաններ։

Մեզնից վերցնենք մեզ քանդող եսեր,
Հերիք մէկ մէկի ցանենք որոտներ.
Մեր մայրը մէկ է, մենք ենք եղբայրներ,
Մենք պիտի փրկենք մեր աշխարհն աւեր։

ՄԵԾ ԻՇԽԱՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Զէյթունի առիւծ, Պապիկ մեծ իշխան
Պարզէ դրօշակ սուրբ ազատութեան.
Կոտրէ թուրքը, ցեղ իսլամական.
Վերջ դիր այդ դաղրած անգութ բռնութեանց։

Նժոյգի նստած, մերկ սուրը ձեռիդ,
Հրաման տայիր անթիւ զօրքերիդ.
Օ՛ն, զօրքերդ քաջ քաջ, ընդդէմ ելնէիր.
Տաճկաց բանակին խիստ հարուած տայիր։

Ընէիր զօրացըդ սաստիկ հրաման,
Թաչէիր բանակըդ գնայիր դէպ Վան,
Լուայիր արեամբ մեծ Վասպուրական,
Առնէիր բերդն մեր հնադարեան։

Հայկազն իշխան, Պապիկ զօրապետ,
Փախչի թշնամին ահեղ կեռ սըրէդ.
Զէյթունի քաջեր առնելով քեզ հետ,
Անցնիս ի Սասուն դէպ ի Մանազկերտ։

Մեր սպարապետ մեծն Թաթուլի
Վրէժն լուծես աւերակուտի.
Մեղացոց արեամբ դաչտեր ոռոգուի,
Զը թողնես այնտեղ նորանցից ոչ մի։

Վայրենի ցեղն, խիստ հրոյ ճարակ,
Վառէիր նորանց որպէս մի պուրակ,
Քո յաղթանակին անվերջ յիշատակ,
Պարզէիր Կարին հայոց գրոչակ։

Շուտ հասնէր զուժն Ապտիւլ Համիտին,
Սարսափը տիրէր Եըլդիզի Քէօշկին.
Խաւարը պատէր Ոսպորի ափին.
Ողբ ու կոծ տեղար Խալիֆի գլխին։

ՄՕՏ ԱՊԱԳԱՅՈՒՄ

Ահա՛, մօտ է ժամանակը,
Դրօշակներ հայկական.
Առիւծ, վիշապ, բազէ, արծիւ,
Պիտ՝ ծաճանուին նախնական։

Կիսալուսինն անհրաժեշտ
Պիտի ձգենք ոտքի տակ,
Թող չը յուսայ այն հրէշը...։
Թէ կը մնանք սրին տակ։

Ժամանակն արդէն հաս է...
Վերջն է նոցա օրերին,
Մեր սրերի բերաններէն
Պիտի վազցուցնենք արիւնին։

Այստուհետեւ չը պիտ՝ թողնենք
Որ մեր առչեւ շունչ առնեն,
Գնդակահար պիտի անենք
Այն չիք տարրը անօրէն։

Ո՛չ, Բահաղը թող չը կարծէ,
Միշտ կը մնայ հոգեառ.
Մեր մայրենի սուրբ աշխարհը
Պիտի փրկենք անպատճառ։

Հայ արիւնը բաւ է խմեն,
Լպիրշ ցեղին անիրաւ.
Հին դարերի վրէժները.
Պիտի առնենք մենք հարկաւ։

Արդէն հայքըս զենքի դիմաց,
Ոխ ենք լուծում անդադար.
Մենք քաջ նախնեաց որդիներս,
Ուխտադրուժ չենք ըլլար։

Միշտ մղելով ընդդէմ թրքաց,
Ահեղ կռիւ անընդհատ.
Բնաւ պիտի չառնենք դադար,
Մինչեւ փրկենք մեր աշխարհ։

ՍՈԽԱԿԻ ԳԱՐՈՒՆԸ

Բնական է որ սոխակն,
Խիստ սիրում է վարդենին,
Նստել երգել թփին վրայ,
Իւր քաղցրիկ մեղեդին։

Նա ջերմ սիրով փափաքում է,
Գարնանային գալստին...
Որ տայ սիրոյ համբոյրները,
Կարմրատայտ վարդերին։

Թրթռում է քնքոյշ սիրտը
Հէգ սիրահար էակին,
Տեսնել գարուն և դայլայլել,
Իւր հայրենի մէջ հողին։

Դեռ նա կ'ողբայ մելամաղձոտ,
Սրտի խորքէն մեղեդին,
Թէ իւր ձեռքէն որպէ՛ս թռաւ,
Այն գարունը թանկագին...։

Եւ թեւերը գլխին քաշած,
Ողբերգում է ցաւագին,
Մի՛թէ այն վեհ գարնան նման
Պիտ՝ չի տեսնէ՞ նա կրկին։

Ա՛խ անիրաւ, անգութ տարերք,
Ի՞նչ էք ուզում սոխակէն,
Թողէ՛ք նորան ազատ երգել,
Իր հայրենի վայրերէն։

Նա վազուց է մեղեդիներ,
Արձակ ձայնով չէ յորդեր.
Փոթորկալի եղանակներ,
Պատճառում են արգելքներ։

Նամանաւանդ հիւսիսային,
Սառուցիկ հողմն փչում է.
Կայծակի շանթ արձակելով,
Մռնչում ու փնչում է։

Որչա՞փ կ'ուզէ, թող նա փչէ,
Մեր սոխակին հոգը չէ.
Այդպէս օրեր շատ տեսեր է,
Զմրան վերջը գարուն է...։

Արդէն երբէք չէ երկնչեր,
Մրրկածուփ ամպերէն.
Նորա համար խոչնդոտներ,
Խաղալիքներ եղեր են։

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿԸ

Հայրի՛կ, հայրի՛կ, Հայոց իշխանիկ,
Արծիւ Վասպուրականի, անթառամ ծաղիկ,
Աստուածընտիր երկնապարգևիկ,
Աթոռըդ է Արարատ հայոց աշխարհիկ։

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ՄԵՎ
им. А. Мясникяна

Համայն հայոց մեծ վեհապետ,
Կեցցե՛ս, Տէր մեր Հայրապետ.
Կեցցե՛ս, յաւէտ մեր աշխարհի.
Մեզ հովուդ բարբուռնապետ։

Տէ՛ր վեհափառ, դու ուխտած ես,
Կարին օծել հարս փեսայ.
Այդ քո իղձը պիտ՝ կատարենք,
Անկեղծ կ՝ասենք սրտով սա։

Թէ եւ ոսոխք իւրեանց նեռեր.
Արձակում՝ են միշտ դէպ քեզ.
Բայց հոլանի բազուկներովդ,
Որպէս Դաւոնդ կը հարուածես։

Զլուա բազուկ, պարթեւ հասակ,
Հայաստանի արծիւն ես . . . .
Անթիւ խոցեր կան սրտումդ,
Լուռ վեհութեամբ տանում՝ ես։

Արքայազնեաց բնակավայր,
Մեր պատմական Մասիսի.
Արծիւ կուրծքդ դրած լանջքին,
Կ՝հարուիս հոգմովն հիւսիսի . . . ։

Բայց այդ քեզի չէ նորութիւն,
Քանի այսպէս մրրկում՝ . . . .
Ապագայի յաղթանակը,
Պիտ՝ ծածանուի քո ճակտում՝։

Այդ շիթերը կրծքիդ մօտէն,
Ալ և ահեակ հոսում՝ ես,
Որ հայ սրտից վազած արեան
Ճապաղիքներն անհետես։

Խիտ ամպերի ետեւիցը,
Մեր վիճակը դիտում՝ ես . . .
Եւ դու մեզնից քո պատկերը
Մշուշներով պատում՝ ես։

Ահա՛, ճգնաժամի մէջ ենք,
Հարկաւ, այդ դու քա՛ջ գիտես.
Արեան հեղեղներ են վազում,
Դարձեալ չեզոք և անտես։

Քո ինչքո՞վքդ գովենք հայքս,
Կամ ի՞նչ սրտով փառք տանք քեզ,
Որ չը տեսանք, գէթ սրբէիր,
Մեր արտասուք աղեկէզ։

Մեր դարեւոր հառաչանքն,
Երբէք չազդե՞ց երկնքիդ.
Ա՜խ, ցաւերնիս բարձրանար,
Ծակէր, մտնէր քար սրտիդ։

Բոպէներ, ժամեր, օրեր,
Ամիսք, տարիք և դարեր,
Հայ աչքերից չը դադարան,
Արտասուքի հեղեղներ։

Դեռ պիտ՝ այրե՞ս մեր սրտերը,
Ցե՞ր ցոյց պիտ՝ տաս այն օրեր,
Որ հայութեան դրօշակն
Ալ, ծածանուէր քո եթեր։

Ի ՋԷՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ

Պատերազմի շեփորներն,
Ամեն կողմից թող հնչեն.
Մենք անվեհեր, կեռ սուր մեր մէջք
Կապած, շտապ դաշտ իջնենք.

Հերի՛ք խաբուինք, գիմակաւոր,
Կեղծ ու պատիր դէմքերէն,
Որք յարաժամ մեզ շոյելով,
Մեր արիւնը քամում են։

Հա՛յք, մեր ջլոտ բազուկներն
Ո՞ր օրերին կը պահենք.
Արդ, հայրենեաց ներկայ վիճակ,
Ահա՛, մենքս տեսնում ենք։

Հայ մանուկը տաճկի սրբից,
Զոհ գնալով մեռնում է.
Դեռ չը բացուած ծաղիկ կեանքը,
Գոռ գերեզման տանում է։

Եւ երբ մայրը այս սեւրակ
Տեսարանը տեսնում է,
Որդեա՛կ, որդեա՛կ հառաչելով,
Այն ալ հոգին փչում է։

Դեռ մենք անշարժ, սառն սրտով,
Մեր վիզ ճկած նայում ենք,
Թէ իւր կիրքը ո՛րպէս կայքէ,
Վայրագ թուրքը, գազան, նենգ։

Լաւ է, եղբարք, մեր մահ կնքել
Քան թէ տեսնել Հայրենիք
Կամ հարազատ սիրելիներ,
Նոցա ձեռին խաղալիք.

Մեր թշնամիք բաւ է կարծեն,
Արամեանքըս երկչոտ ենք.
Հրացան ձեռներս իջնենք քաջ քաջ,
Դէմ առ ընդդէմ խիզախենք։

Մոլի, զազիր ցեղի արեամբ,
Հայկեան դաշտեր ոռոգենք.
Այս ախրագին սեւրակներ,
Մեզնից յաւէտ փարատենք.

ՀԱՅ ԿՂԵՐԸ

Ո՞ւր են արդեօք մեր սուրբ հարքն,
Ձեռքեր առնեն խաչավառ,
Եւ գան հանդէս որպէս Ղեւոնդ,
Խրախուսող սրտեր վառ։

Ո՞ւր են դասքն քահանայեաց,
Պարտաճանաչ երէցներ,
Անձն իրանց զոհ բերելով,
Հանդիսանալ Ղեւոնդներ։

Երբէք նոքա այս սրբազան,
Պաշտամունքն չունեցան.
Դորա համար ազգի ցաւերն,
Օրըստօրէ աւելցան . . . ։

Երբ ուսումնք նոցա տեա՛ր,
Մեզ չի մնայ քաշելիք.
«Մեղա՛յ օրհնածք, ի՞նչ կայ լալու»,
Դեռ շատ ունէք տեսնալիք . . . :

Ահա՛, եղբա՛ր, հայ կղերի,
Միշտ մեզ բրդած քարոզներ.
Ալ ի՞նչ հարկ կայ տեսնել քնում,
Անուշ, անուշ երազներ:

Երբ ձայն լսեն մամոնայի,
Թեւ առնելով թռչում են.
Խաչ ու բուրվառ, մաշտոց, փիլոն,
Ի միասին տանում են:

Հոգեհանգիստ, փեսապսակ,
Ուրախ, ուրախ երգում են.
Տաք տաք շոգիք դուրս տալով,
Անթիւ օրհնենք հոսում են:

Այր ու ձաի շարականներ,
Ճիչ ձայներով ասում են.
Քիչ մնում է կոկորդներէն,
Լեարդներն ալ դուրս բերեն:

Բայց երբ ազգին օրհասական,
Ճգնաժամը տեսնում են.
Այդ ալ միայն Աստուած գիտէ,
Ո՛ր ծակերը մտնում են . . . :

Մեր հոգեւոր իշխաններին,
Զի՞նչ տեղիք կայ բան ասել.
Բանն ասանկ է սրբազանե՛ր,
Ոչ թէ ձեզի բանրասել:

ՀԱՅԻ ՎԻՃԱԿԸ

Դարերը շար շար կուգան ու կանցնին,
Մեր օրն ու արեւ նոյն խորն է մթին.
Արեան ծարաւի թշնամիներըն,
Դեռ կրծոտում են մեր սիրտն ու հոգին:

Մինչ ե՞րբ վշտալի, ձայներ եղկելի,
Լսեն մեր ականջք. հարազատների . . .
Եւ տեսնել վիճակ նոցա զաղրելի,
Մատնուած դառն ճգնաժամերի:

Եւ դեռ դեռահաս, ծաղիկ կոյսերաց,
Բռնի քաշկում են մօրանց գրկերէն.
Ճիչ ու բարբանջանք եղուկ ծնողաց,
Ի զուրը, դէպ ի օդը ցնդում են . . . :

Հա՛յք, միթէ մեզի դեռ չէ՞ նախատանք,
Նորածին մանկունք հանդէպ մեր աչքի,
Դահիճ խուժանաց դառնում են տափնանք,
Անմեղ մանուկներ գրում են հողքի:

Այլազանների նողկալի արարք,
Անասելի են նոցա մրոտանք . . .
Լաց ու հեկեկանք, կոծ ու կողկողանք,
Բռնել է զաշխարհ ազգի ազեատանք:

Ա՜խ այն տմարդի չիք նենգամիտներ
Միթէ անընդհատ մեզի իշխողներ,
Կամ միթէ նոցա ոտնաց հողաթափ,
Դարեր չարունակ պիտ՝ ըլլա՛նք, հա՛յեր:

Հերի՛ք է, եղբա՛ր, գահէ գրկուած,
Թշնամեաց թրէն մեր կեանքը կախուած.
Զեռքերնիս ծալած, ապշած, չուարած,
Մէկուսի, մահը հազարի փոխած:

Հի՞մի էլ նիրհենք, հայե՛ր, հի՞մի էլ,
Որ մեր ազգային ուանդ սրբութեանց.
Մեկնում են զուարք պղծեալ ձեռներն,
Տանել կրքերի յաղթանակ իւրեանց։

Սթափուենք, եղբա՛րք, ա՛լ բաւ է նիրհենք...
Հոլանեաւ բազկաց ուժերը ցոյց տանք,
Վատազգիներին հուր ու փուր անենք,
Եւ չպրենք զանենք դէպ ի խորխորանք։

Կեանքի ասպարէզ դէպ ի սլանանք,
Պարզենք ճակատներ թշնամու դիմաց,
Հայոց դաշտերայք արեամբ լուանք,
Սրբենք զարտասուք յաջորդ սերնդաց։

Մինչ ե՞րբ լոկ խօսենք, եղբարք պատուակալք,
Հայք սրտով ձուլուած պէտք է գործնական,
Եւ առնենք խլուած մեր թուրն ու թագն,
Ապա թէ ասենք ԿԵՑՑԷ՝ ՀԱՑԱՍՏԱՆ։

ՆՈՒԷՐ ԿԱՐԱՊԵՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆԷ

ՀԱՑԸ ՔՈՒՆԻՑ ԿԸ ԶԱՐԹԻ

Ահա՛ շնչեց քաղցր զեփիւռիկ,
Դեռ մենք հայերս կը քնենք լռիկ...
Ամեն ոք տուաւ կոփել իր խոփիկ,
Որպէս զի գարնան վարէ իր արտիկ։

Զօրավարք կանչեն իրանց զօրքերու,
Որ շուտով սրբեն ժանդն սրերու.
Թամբեր հագցնեն նժոյգ ձիերու,
Երթան թշնամեաց դաշտեր ներկելու։

Զարթի՛ք. հա՛յ եղբարք, քանի՞ մեկ քնենք,
Կուգան թշնամեաց խուռն բազմութիւնք.
Ճակատ առ ճակատ պէտք է խիզախենք,
Որպէս զի փրկենք սիրուն հայրենիք։

Հասաւ ժամանակ, պէտք է գործելու,
Թշնամու լուծը մեզնից խզելու.
Տանք մեր սրերը շուտով սրելու,
Որպէս կարենամք պատիւ փրկելու։

Դէ՛հ, շտապեցէ՛ք, դէպ ի զէն, ի սուր,
Ահա՛ թշնամին եկաւ մինչեւ ո՛ւր...
Շուտով հասնինք մենք, առնենք այն բլուր,
Խորտակենք վատերի բանակն ընդհանուր։

Մեզի կ՚սպասէ աշխարհն Հայաստան,
Ինչու որ մենք ենք նրան ապաստան.
Թափենք սուրբ արիւն, լինենք քաջ պաշտպան,
Վանենք թշնամին հողէն Հայկազեան։

Բա՛ւ է, եղբա՛ր, մենք այսքան տարիներ,
Լինենք թշնամու անարգ գերիներ.
Նոցա լծին տակ դնենք մեր վզեր,
Քաշենք խոշնդոտ ու դառն ցաւեր։

Դուք Հայաստանի քաջ հարազատներ,
Շուտով կազմեցէք խրոխտ բանակներ.
Կը յիշէ՞ր արդեօք մեր նախնի քաջեր,
Ինչպէս քանդէին թշնամու բերդեր։

Ուրեմն առնենք տէգ ու նիզակներ,
Կարենք թշնամու զօրքի ճամբայներ,
Որ չը կարենան մտնել մեր հողեր.
Քանդեն, աւերեն հէգ հայի տներ։

Ափսո՜ս թող լինին մեզի այս օրեր,
Եթէ մենք թողնենք Հայաստանն անտէր.
Մի թէ սակա՞ւ են մեզնից այն քաջեր,
Զը փռեն գետին իժեաց դիակներ։

Ա՛լ չիկայ միջոց յոյս տանք մեր սրտին,
Կարդանք հրաւէր քաջ զօրագնդին.
Շուտով մենք հասնինք մէջ մարտի դաշտին,
Թափենք գնդակներ թշնամու գլխին։

Գետին տապալենք նոցա դիակներ,
Որ տուած են մեզ անթիւ խոր վէրքեր.
Կը կարծեն մեզի իբրև կոյր հաւեր.
Այժմ ցոյց տանք մենք թէ ի՛նչ են Հայեր։

Արդէն պատրաստ է ամբողջ Եւրոպան,
Որ վերականգնէ չքնաղն Հայաստան.
Միայն կարօտ է հայի քաջ տղան,
Մէկը տայ իրեն ահեղ հրաման։

ԱՍՏՂ ՄԸ

Առեաւոտեան լուսադէմին,
Աստղ մը տեսայ խիստ փայլուն,
Իսկոյն եւեթ գրաւուեցայ,
Նորա լոյսին վառվռուն։

Ինչպէս ոստին վրայ վարդը,
Գեղափթիթ ծաղկուտով.
Վառ գոյնովը նախանձ կ՚ազդէ,
Անմահական բուրումով։

Ես իմ կեանքում չէի տեսած,
Դորա նման գեղուն.
Իր բնական թարմ գոյնով,
Փայլ է տալիս աշխարհի։

Շողշողում է երկնաձոցում,
Աղտանանդ մը պսպղուն.
Մարգարիտներ այտերիցը,
Կաթկթում է ցողցողուն։

Ծնկի գալով գլուխ տուի,
Երեսս հողին քսեցի.
Փառք քո անբիծ սուրբ ծագմանդ,
Բիւր անգամ ասացի։

Եւ ուխտեցի չի մոռանալ,
Անգին դէմքը չքնաղուն.
Որ նա ծագեց իմ խոր սրտի,
Վէրքեր լիք լիք էչերուն։

Սա գերդ փայլուն նորեկ աստղը,
Ուշք գրաւէր ազգերուն.
Բայց դեռ նոքա իբրեանց միտքը,
Չը յայտնեցին . . . հայերուն։

Թէեւ նա քեզ հետ,
Մեղը ու շաքար է,
Բայց սրտում՝ մեր սեւ,
Օձեր պառկեր է։

Եւ չունի հանգիստ,
Մտայուզուել է.
Թէ որպէս քեզի,
Գեահն տապալէ։

Զօտարի լարած,
Դաւին մէջ ինկած,
Պիտ՝ տեսս աւաղ,
Երբ քեզ կորցրած։

Եւ կենաց օրերդ,
Բեղնից ալ խզուած.
Անհուն անդունդի,
Խոր խոր ընկղմած։

Դու հայրենիքիդ,
Թէ չըլլաս տէրը.
Մատնես զեղբայրդ,
Թշնամու ձեռն։

Ո՜հ յայնժամ ազգիդ,
Կը լինիս միակ,
Աւելորդ նոցա,
Մի զազիր դիակ։

ՆԱԽԱՆՁՈՒԹԻՒՆ

Ա՜խ, տուն քանդող նախանձութիւն,
Ե՞րբ դու հային պիտ՝ թողնես.
Հաւատարիմ քեզ ծառայող,
Այս կոյր ազգին գերել ես։

Փաթաթուելով օձիքնոցէդ,
Եւ պինդ կողմըդ հարուել է.
Յարգանքները մատուցելով,
Ոտքիկներդ լիզում է։

Եւ պատկերը դիմակի մէջ,
Առած եղբօր մատնում է.
Սա զազրելի քայլերովը,
Ազգին տունը քանդում է։

Կասկածանքի տեղիք չի կայ,
Ո՛չ, ո՛չ նախանձ նենգամիտ.
Սիրոյդ վառուած, ջանք չէ խնայում.
Դոհացում տալ սոսկ կամքիդ։

Քանի՛ միլիոն սրտերի մէջ,
Այդ թունաւոր սեւ սերմդ,
Սերմանելով որդւոց որդի,
Յառաջ տանում յաղթումդ։

Քանի հայը ինքնաճանաչ չէ,
Մի՛ վախենար նրանից.
Ո՛չ, նա երբէք իւր երեսը,
Դարձնող չէ քեզանից։

Արմատներդ խոր հիմնել ես,
Ձեռ մաքրուիր հայ սրտից.
Նա պատրաստ է միշտ ջրի տեղ,
Խմել զեղբօր արիւնից։

Եւ ամեն մի հրահանգը,
Նա գործում է ճշդութեամբ.
Անկեղծ սրտով աշխատում է,
Սուսիկ բուսիկ նրբութեամբ։

Արդ տեսնում է իւր եղբօրը,
Որ թշնամու ոտքի տակ.
Աղերսում է, փրկէ զիս,
Նա չէ լսում աղաղակ։

Այդ չէ խորհում այսօր նրան,
Հապա վաղը իմ վիճակ . . .
Զէ որ ինձ ալ համանման,
Պէս պիտ՝ ընեն մի դիակ։

Արդէն հայը վաղուց քեզի,
Ըրեր իրան պաշտելին.
Գոնէ ինքդ խղճայ, նա՛ խանձ,
Անմեղ յաղորդ սերունդին։

ՊԱՏԵՐԱԶՄ

Ծայր հեռաւոր Զին աշխարհում
Թնդանօթներ որոտում.
Սարսափելի դոռ դոչումներ,
Օր ըստ օրէ աւելնում։

Այդ երկնային կայսրութեան,
Լայնածաւալ դաշտերում.
Ռուսք, ճաբոնք հանդէս եկած,
Ցաղթութիւն են որոնում։

Փոթորիկը չզարշեր է,
Մոնկոլների երկրում,
Եւ ահռելի ընդհարումներ,
Տեղի տրուէր Մանճուրում։

Այս մեծ խրոխտ երկու ազգը,
Գերակշիռ ոյժ կազմում,
Պարզած դրօշք, լանջք եթերի,
Խիզախ, խիզախ ճակատում։

Սա պատմական հին աշխարհը,
Ներկայումս բեմ մարտի,
Մշուշ պատեր լեռանց գագաթք,
Ծխով լեցուեր վառօդի։

Ցաղթանակը արդ պատանի,
Կայսերութեան կը պատկի.
Խանդ, խրախճանք Թօգիօում,
Անպատմելի զամենքի։

Ռուրիկեան Մուժիկ ազգին,
Արդէն տիրեր սարսափանք.
Հայրենասէր ճաբոնացւոց
Սատկայեղ է արշաւանք։

Այս քաջ ազգի աչքը յառած,
Մօսքների երկրաբք.
Արծուի նման սաւառ սաւով,
Որ արշաւել դէպ ուրալք։

Կեցցէ՛, կեցցէ Մէյիրզ Իսօն,
Կեցցէ՛ ճաբօն և Միգատօն։

ՍԱՍՆՈՅ ՀԵՐՈՍՆԵՐԸ

Ահա՛ Սասնոյ անմատչելի,
Այն վեհ, հպարտ լեռներէն,
Մեր հարազատ եղբայրներն,
Խիզախ, խիզախ կռւում են։

Թրքաց երկչոտ զօրավաշտեր,
Հազարներով փռում են.
Մեր դարեւոր հին, նոր նախնեաց,
Վրէժները լուծում են։

Օսմանների դիակներով
Այդ աշխարհը ծածկում են,
Եւ ապառաժոտ լերանց լանջքէն,
Արեանց վտակը վիժում են։

Քիւրտ ցեղային վոհմակներն,
Լեզապատառ փախչում են.
Հայ պատանեաց գնդակներէն,
Գետնատապալ լինում են։

Կեցցե՛ն Սասնոյ քաջ հերոսներ,
Հայաստանի փրկիչներ.
Նոցա համար նախատանք է,
Մահէն երես դարձուներ։

Ահա՛, հայե՛ր, արդ տեսնում ենք,
Արիւնակից եղբայրներ.
Կեանք չեն խնայում իւրեանց սրեամբ
Լուանում են այն դաշտեր։

Ատելի է որ այն հայը,
Իւր զեղբօրը չի օգներ.
Սառնած սրտով նստած նայում,
Զէն ի ձեռին չի ելներ . . . ։

Մի՞թէ դարձեալ խոնարհ գլուխ,
Որպէս արձան անշարժուենք.
Դէ՛հ խաւարտի դարեր մեղնից,
Ելնենք իսպառ անհետենք։

Ազատ տեսնենք, ազա՛տ, ե՛զբարք,
Մեր հայրենեաց լեռները.
Ազատ խօսենք, ազատ հայկեան,
Մեզ նուիրած բարբառը։

Ազատ գրգուենք, ազատ համբոյր
Տանք սիրասուն վարդերուն . . . .
Ազատ կեանք մեր, ազատ տեսնենք,
Սուրբ աշխարհը մեր սիրուն։

Գնա՛ գրքոյկ իմ պաշտելի,
Հայ եղբարքս տեսնելու,
Եւ քաց սիրարդ նոցա առջեւ,
Խոր խոցերդ ցոյց տալու։

Պատմի՛ր նոցա Հայրենիքի
Սեւաբազդիկ վիճակը.
Եւ թէ ինչպէ՛ս հէգ զաւակունք,
Մեռնում, կորչում բանտերն։

Խօսի՛ր նոցա որ չը մնան,
Դառնան իւրեանց տներն.
Խօսի՛ր նոցա թէ ձեր տիկնայք,
Քաշում տանում քիւրտերը . . . ։

Խօսի՛ր նոցա վառ սրտերին,
Աղի արձանց ծոր-ծորը.
Որ մի բոպէ չունին հանգիստ,
Աղերսում են առ Տէրը։

Խօսի՛ր նոցա, որ ձեզ հայեր,
Բաւ է ծաղրեն ազգերը.
Մարդ մը կ՚ապրի պատուի համար,
Որ չ՚արատէ զօտարը։

Գընա՛ գրքոյկ, դու իմ եղբարց,
Տո՛ւր զականջաց քո ձայնը.
Գուցէ նոքա ազատ կեանքում,
Մոռցած լինին զամենը . . . ։

ՀԵՂԻՆԱԿ

ՎԵՐՋ

ՊԵՏԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
Ա. ԿՄ. Հ. Մասիսյանի անվան

ՎՐԻՊԱԿ

Էջ	Տող	Սխալ	Ուղիղ
1	14	սուղ	սոխ
7	2	ճապարի	հապարի
13	1	մբրոի	մարոի
21	23	զէնքերով	զէնքերովՔ
29	18	պիտ՝	պիտի
34	1	ուսում ենք	սուում ենք
34	2	մեզ չի մնայ	մեզ չի մնաց
34	18	ճիչ	զիլ
43	21	ինքնաճանաչ	ինքնաճանՀչ
44	7	փրկէ զիս	ո՜Հ, փրկէ զիս
45	24	Որ արչաւել	Սրարչաւեչ

ՀՀ Ազգային գրադարան
NL0375293

ԳԻՆ Ի ՖՐԱՆՔ

Գրքուկիս հասցէին կէսը պիտի յատ
ուի Հայ որբուկներուն, իսկ մնացեալ կէսը
արդէն հաղիւ կը համապատասխանէ գրքին
պաղրական ծախքերուն, մեզի պիտի վերա
հենք, յառաջիկային երբոյգ ապագրութիւն
ալ տալու համար Հայ Հասարակութեան

ՀԵՂԻՆԱԿՆ

60380